

դուրյան ու հանգստի վերջին վայրը, քո՛ղ մեզ համար համոզմունք դառնա այն վստահությունը, որ Գեորգ Զ.ի պայծառ անունը ոսկե տառերով է գրվում Հայ բազմաշարշար Յկեղեցու բազմադարյան պատմության էջերում: Թո՛ղ Ձեզ մխիթարի նաև այն համոզ-

մունքը, որ Արարիչն Աստված հայ պանծալի ազգի միջից երևան կհանի արժանավոր Տեղակալ և Գահակալ: Թո՛ղ հավերժ լինի Իր ազգի և հարազատ եկեղեցու այս պանծալի զավակի հիշատակը. ամեն:

ՄԱՄԱՐԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՆՏԱՅԱՆ

(Առաջնորդական տեղապահ
Հյուսիսային Ամերիկայի հայոց
արևելյան թեմի)

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԵԺ ԿՈՐՈՒՍԱԸ

«Ոչխարք իմ ձայնի իմում լսեն և ես ճանաչեմ զնոսա և զկեցի իմ գան»:

(ՀՈՎՀ., Ժ 27)

Վշտակից սրբազա՛ն եղբայրներ և սգակի՛ր ժողովուրդ.

Մա՛նր և անպատում եղավ մեր վիշտը, երբ Մայր Աթո՛նէն հասավ մահագույժ հեռագիրը: Չկա՛ր այլևս մեր հոգեւոր Հայրը և մեր

եվ անմիջապէս որոշեցինք փութալ Մայր Աթո՛ն՝ բաժնելու համար Ձեր վիշտը և մասնակցելու համար վերջին հարգանքին, որ պիտի բնկերանա Անոր անշնչացած մարմինին մինչև Իր վերջին կայանը:



ԳԵՐԱՇՆՈՐԷ Տ. ՄԱՄԱՐԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՆՏԱՅԱՆԸ ԴԱՄԱՐԱՆԱԿԱՆ Է ԿԱՐԳՈՒՄ

Ս. եկեղեցվո մեծ Հովիվը, ու սուգի մեջ էին Իր որդիները, թե՛ Հայրենիքի և թե՛ Սփյուռքի մեջ:

Խոր եղավ նաև ցնցումը՝ մեր հոգիեն ներս ու սուգը պատեց նաև մեր հուզված սիրտը:

Հանուն Ամերիկայի հայրենակարոտ հայոց, եկեղեցվո հովիվներուն, պաշտոնական մարմիններուն և ժողովուրդին, բող ներվի այժմ մի քանի բառերու մեջ ամփոփել և ըսել մեր հիացումին անամփոփելի մեծությունը և մեր

վիշտին անասելի խորությունը՝ Ս. Տ. Գեորգ Զ. Մայրազույն Պատրիարքի և Կաթողիկոսի վախճանումին առիթով:

Շառավիղը էջմիածնա Ս. Աթոռի մեծագործ կաթողիկոսներուն, Գեորգ Զ. Կաթողիկոսը խորհրդանշիչն էր, ամեն բանն առաջ, իրական Հովվապետին, հայ Հովվապետին, որովհետև հարագատ հովիվի ձայնն էր Իրը ու այդ ձայնն էր մեզի համար՝ պատգամ, առաջնորդություն, ուղղություն, վստահություն և հույս:

Ձայնն էր Ան մեր Եկեղեցվո դարավոր հավատքին, որ եերջնչում և ուժ պարգևած է տառապող և թափառական հայուն:

Մեզի համար մխիթարություն էր տեսնել, Իրով իրականացած՝ միասնականացած և կեդրոնացյալ Հայաստանյայց Եկեղեցին, որովհետև հավատացած ենք միշտ, որ համարող սերն ու միությունը հաջողության և հառաջդիմության մեծագույն երաշխիքն են, և երջանկամիջատակ Հայրապետը հաջողած էր վերախմբել ամենահեռավոր բեկորները էջմիածնա գաղափարին շուրջ՝ լսելի ընելու համար Հովվապետի առաջնորդող ձայնը մինչև մեր հեռավոր երկիրը:

Միացյալ և համադրված Եկեղեցիին ներշնչումն էր Ան. Իր կրոնական հավատքն բխած խաղաղասեր ոգին, անկաշկանդ հայրենասիրությունը, ճառագայթող իմաստությունը՝ շարունակեցին ըլլալ Հայաստանյայց Եկեղեցվո ավանդական միտքն ու շունչը. իսկ մենք, արտասահմանի ժողովուրդ ու Եկեղեցական, լսեցինք Իր ձայնին ու աշխատեցանք առաջնորդել մեր հոտը նույն միտքով և շունչով:

Այժմ, ի տես մեր սիրելի Հայրապետի անշնչացած մարմինին և փակ շրթներուն, խորապես կզգանք, թե Հայաստանյայց Եկեղեցին, զրկված իր քաջ Հովվապետեն, կրպասն իր բարձրաստիճան պաշտոնյաներեն, որ ավելի՛ ևս հավաքվին Ս. էջմիածնա Կաթողիկեին ներքև և միացնեն իրենց ուժը՝ շարունակելու համար սկսված գործը, նո՛ւյն սիրով, նո՛ւյն իմաստությամբ, նո՛ւյն ոգիով և նո՛ւյն խանդավառությամբ, որպեսզի արտասահմանի մեր զավակները շարունակեն լսել քաջ Հովվապետի ձայնին ու Հայրենիքը հանչեա զիրենք և հետևին մեզի:

Տերը անշարժ և անվտանգ պահե Մայր Աթոռը և Ս. Եկեղեցին, ի փառս յուր և ի պայծառություն մեր Հայրենիքին:

ՄԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(Կաթողիկոսական պատմիբակ
Հարավային Ամերիկայի հայոց)

ՈՉ ԵՎՍ Է ՀՅՅՈՑ ՄԵԾԱԿՈՐԺ ՀՅՏՐԱԳԵՏԸ

Հեռավոր Հարավային Ամերիկայի հայրենասեր հայության անունով, կուգամ սգակիր սիրտով խնամահելու մեր ժամանակի մեծագույն հայ Եկեղեցականի խնկելի հոգվոյն առջև, և հանուն մեր վիճակի բարեպաշտ ժողովրդյան՝ ծաղկեպսակ մը դնելու հայ ժողովուրդի մեծագործ Հայրապետի դագադին վրա:

Սուգ է պատեր հայ ժողովուրդի սիրտը, սև է զգեցեր Հայոց Եկեղեցին, որովհետև կորսնցուց իր մեծանուն ու շինարար, հայրենասեր ու ազգասեր Հովվապետը: Ինկա՛վ հայոց նոր Հայրիկը, ինկա՛վ հայության բարեխնամ Հայրը, Հոգևոր ճեմարանի հայրագործով վերատեսուչը, հայ հավատքի խիզախ ու անվեհեր ախոյանը, Հայ Եկեղեցվո հեռատես ու իմաստուն Հովվապետը: Ինկա՛վ նոր ներսես Շինողը, մեր ժամանակի Մովսես Տաթևացին: Ինկա՛վ հայոսթյան պաշտելի Հայրը:

Սակայն մահը զինքը ա՛լ ավելի գեղեցկացուց, որովհետև մեծ ու բարի հոգիները կհաղթեն մահվան:

Երանաշնորհ Գեորգ Զ. Հայրապետը, արդարև, եղավ «Յաղթող և Ս. Հայրապետ, նման Մեծին Մովսիսի, սին լուսոյ կանգնեալ ի մէջ Հայաստանեայց»:

Ան հաղթահարեց բոլոր դժվարություններուն ու վերականգնեց Մայր Աթոռը իր հին շքեղ փառքին մեջ, վերաբացավ Հոգևոր ճեմարանը, ու եղավ Սփյուռքի պանդուխտ հայության Մովսեսը, ազատարար առաջնորդը դեպի Ավետյաց երկիրը, դեպի վերածաղկյալ ու վերաշինյալ Հայրենիքը: Իրավամբ Ան եղավ հայ հավատքի լուսեղեն սին մը Հայրենիքի ու արտասահմանի հայության միջև:

Անոր ազնվական հոգին ու մեծ սիրտը միշտ բարբախեցին սիրովը հայ ազգին ու Հայրենիքին, սիրովը Իր բոլոր եծդեն զավակներուն, ի նպաստ Հայրենիքի վերելքին ու վերածաղկումին, ի խնդիր հայ ժողովուրդի արդար դատին ու հայության ապագայի վառ հույսերուն ու իղեպղներուն: Հայ Եկեղեցին զրկվեցավ իր աստվածարյալ մեծանուն վեհապետեն, շինարար ու բարե-